# ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

## ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆԻՍՏԱՇՐՋԱՆ

Այս տարվա սեպտեմբերի 21-ին Երևանում բացվեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի և Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի միացյալ հոբելյանական գիտական նստաշրջանը՝ նվիրված Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակին:

Հակիրճ ներածական խոսքով նստաշրջանի առաջին պլենար նիստը բացեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, սոցիալիստական աշխատանքի հերոս, ակադեմիկոս Ա. Պ. Ալեքսանդրովը, որը մատնանշեց 150 տարի առաջ տեղի ունեցած այդ բախտորոշ իրադարձության պատմական մեծ նշանակությունը հայ ժողովրդի հետագա ողջ զարգացման համար:

Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեի և հանրապետության կառավարության անունից նստաշրջանի մասնակիցներին ողջունեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Տ. Սարգսյանը:

— Թանկագին ընկերներ, հարգելի հյուրեր,—ասաց նա,—հայոց հինավուրց աշխարհում սկսվել են համաժողովրդական հանդիսությունները: Մեր ժողովուրդը խորին երախտագիտությամբ և ուրախությամբ է նշում այն պատմական ակտի 150-ամյակը, երբ Արևելյան Հայաստանը մտավ Ռուսաստանի կազմի մեջ, առհավետ իր բախտը կապելով ռուս մեծ ժողովրդի հետ: 1828 թ. պատմական իրադարձությունը հսկայական նշանակություն ունեցավ մեր ժողովրդի պահպանման և նրա դարավոր պատմության համար: Դրանից հետո հայ ժողովրդի կյանքի 150-ամյա կենսագրությունը, պատմական դեպքերի հետագա ողջ ընթացքումը նոր ուժով և անհերքելիությամբ հաստատեցին այն ճշմարտությունը, որ նրա փրկությունը, գոյատևումը և բարգավաճումը պայմանավորված էին ռուս մեծ ժողովրդի ազատագրական առաքելությամբ...

Ռուսական հաղթական զենքի, հայ-ռուսական ռազմական դաշինքի շնորհիվ, այն բանի շնորհիվ, որ Հայաստանը անցավ Ռուսաստանի հովանու տակ, իրականությունում դարձավ մեր ժողովրդի և նրա լավագույն զավակների դարավոր երազանքը: Պատմությունը պահպանել է երկու ժողովուրդների բազմադարյան և անշահախնդիր բարեկամության, Անդրկովկասի եղբայր ժողովուրդների ազատագրության համատեղ պայքարի բազմաթիվ հուզիչ էջեր, ռուս հասարակ զինվորի մարդասիրության և արիության օրինակներ...

Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման շնորհիվ հայ ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրումը միաձուլվեց Ռուսաստանում սկսված հեղափոխական շարժման հետ: «Ցարական ինքնակալության դեմ Ռուսաստանի պրոլետարիատի պայքարի պատմական փորձը Հայաստանի աշխատավորներին ցույց տվեց ազատության, սոցիալական առաջադիմության միակ ճշմարիտ ուղին՝ հեղափոխական պայքարի ուղին, սոցիալիստական վերափոխումների ուղին»— ասել է Լ. Ի. Բրեժնևը:

Ռուսական հեղափոխական մտքի և առաջին հերթին լենինիզմի անմիջական ազդեցությամբ ձևավորվեց հայ մարքսիստ հեղափոխականների փայլուն կոհորտան, որն աներեր գնաց Լենինի ուղիով, հարազատ ժողովրդի վերջնական փրկության միակ ուղին տեսնելով ռուսական հեղափոխության հաղնակի մեջ...

Եվ միայն Լենինի գաղափարները, Հոկտեմբերի գաղափարները նրան լիովին ազատագրեցին սոցիալական ու ազգային ճնշումից: Իր գոյության առաջին իսկ օրերից Սովետական Ռուսաստանը, մեծ Լենինի գլխավորած նրա կառավարությունը բարեկամության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի ձեռք մեկնեցին հայ աշխատավորներին: Հայ ժողովրդական ապստամբած մասսաները, բոլշևիկ լենինյանների գլխավորությամբ, օգնության հասած XI Կարմիր բանակի օժանդակությամբ, 1920 թ. նոյեմբերին Հայաստանում հռչակեցին սովետական իշխանություն:

Սոցիալիզմի պայմաններում սոցիալ-տնտեսական նոր հարաբերությունները ժողովրդի մեջ արթնացրին չտեսնված ստեղծագործական ուժեր ու եռանդ: Հայ ժողովուրդը մեր հայրենիքի ժողովուրդների միասնական ըն-

տանիքում պատմական սխրանք գործեց: Նա ոչ միայն մոխիրներից վերածնեց իր հնադարյան երկիրը, այլև Հայաստանը դարձրեց բարձր զարգացած արդյունաբերության, խոշոր սոցիալիստական գյուղատնտեսության, ծաղկող գիտության և արվեստի հանրապետություն: Երբեմնի հետամնաց և քայքայված Հայաստանը դարձավ բազմահարկ տներով, ճարտարապետական գեղեցիկ անսամբլներով, վեհաշուք հուշարձաններով վարդագույն քաղաքների երկրամաս: Իսկական վերածնունդ ապրեց մեր ժողովրդի բազմադարյան մշակույթը, ստանալով նոր լիցք, նոր բովանդակություն:

— Հիրավի, վիթխարի են,— ելույթի վերջում ասաց ընկ. Սարգսյանը,— Հայաստանում կատարված մեծագործությունները սովետական իշխանության տարիներին՝ մեր ժողովրդի դարավոր պատմության այդ կարճ ժամանակամիջոցում, որը մենք, հայերս, անվանում ենք մի, բայց տարողունակ բառով՝ վերածնունդ:

Այնուհետև ողջույնի խոսքով հանդես եկավ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Ա. Պ. Ալեքսանդրովը:

Պլենար նիստում ընդարձակ զեկուցումներով հանդես եկան ակադեմիկոս Պ. Ն. Ֆեդոսևևը «ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը Հոկտեմբերի մեծ նվաճումն է» և ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը՝ «Գիտության զարգացման ուղիները Սովետական Հայաստանում» թեմաներով: Լսվեց նաև ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Ռ. Հովհաննիսյանի զեկուցումը՝ «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու պատմական նախադրյալները» թեմայով:

Սեպտեմբերի 22-ի առավոտյան պլենար նիստում լսվեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի զեկուցումը «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին» թեմայով: Այնուհետև ողջույնի խոսքով ելույթներ ունեցան Ուկրաինական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտ Կ. Մ. Սիտնիկը, ակադեմիկոս Ն. Մ. Էմանուելը, Վրացական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Ե. Կ. Խարաձեն, Էստոնական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Կ. Կ. Ռեբանեն, Ադրբեջանական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտ Գ. Ֆ. Սուլթանովը, Ուզբեկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտ Մ. Կ. Նուրմուհամեդովը, ակադեմիկոս Ն. Մ. Ժավորոնկովը, Կիրգիզական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Կ. Կ. Կարակեևը, Մոլդավական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահության գլխավոր գիտական քարտուղար Վ. Ա. Անդրուսակիևիչը, որոնք ընդգծեցին Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման պատմական մեծ նշանակությունը:

Նույն օրվա երեկոյան կայացավ հասարակական գիտությունների պրոբլեմների գծով սեկցիաների միացյալ նիստ, որտեղ զեկուցումներով հանդես եկան ակադ. Յու. Վ. Բրոմլեյը («ՍՍՀՄ-ում ազգային պրոցեսների ուսումնասիրման հիմնական փուլերը և ուղղությունները»), ակադ. Տ. Ս. Խաչատուրովը («Սովետական տնտեսագիտության հիմնական խնդիրները»), ակադ. Մ. Բ. Միտինը («Գաղափարական պայքարի առանձնահատկությունները արդի պայմաններում»), ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. Ա. Գալոյանը («Հոկտեմբերի ազատագրած հայ ժողովրդի վերածնունդը»), ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Մ. Տ. Իովչուկը («Միջազգայինի և ազգայինի դիալեկտիկան փիլիսոփայության զարգացման մեջ»):

Սեպտեմբերի 25-ին և 26-ին կայացած սեկցիոն նիստերում կարդացվեցին 30-ից ավելի զեկուցումներ, որոնցով հանդես եկան Մոսկվայի, Կիևի, Քիշինևի, Բաքվի, Թբիլիսիի, Դոնի-Ռոստովի, Լվովի, Երևանի գիտնականները: Զեկուցումները նվիրված էին հայ-ռուսական պատմական կապերին, հայ և ՍՍՀՄ մյուս ժողովուրդների գրականության, արվեստի և կուլտուրայի այլ բնագավառների առնչություններին:

Հոբելյանական գիտական նստաշրջանին ներկա էին Հայաստանի կոմունիստական կուսակցության և ՀՍՍՀ կառավարության ղեկավարներ ընկ. ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը, Ֆ. Տ. Սարգսյանը, Պ. Պ. Անիսիմովը, Կ. Լ. Դալլաքյանը, Վ. Բ. Ղալումյանը, Հ. Մ. Ոսկանյանը, ՍՍՀՄ ատոմային էներգիայի օգտագործման պետական կոմիտեի նախագահ Ա. Մ. Պետրոսյանցը, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտներ, ակադեմիկոսներ Վ. Ա. Կոտելնիկովը, Ե. Պ. Վելիխովը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալներ Ա. Մ. Կիրակոսյանը, Կ. Հ. Ղամբարյանը, Ռ. Ֆ. Սվետլովան, ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ Յա. Ի. Խաչիկյանը, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի և Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահությունների անդամներ, եղբայրական հանրապետությունների գիտությունների ակադեմիաների պատվիրակությունների ղեկավարներ, սովետական ականավոր գիտնականներ:

**Ա. ՄԱՐՏԻԿՅԱՆ**